ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հուլիսի 2024թ. թիվ 391-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 08.07.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 27.05.2024թ. թիվ 771-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակով պայմանավորված աղետի հետևանքների վերացման աշխատանքների կատարման և բնակիչների սոցիալական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ընթացքում առաջացած ծախսերը փոխհատուցելու համար «Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին հատկացնել 3375000 (երեք միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, իսկ «Արմեն Կարապետյան» ԱՁ-ին՝ 100224 (հարյուր հազար երկու հարյուր քսանչորս) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հնգօրյա ժամկետում հատկացնել գումարը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

09/07/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. հուլիսի 9
ք.Վանաձոր